# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<17>> դեկտեմբերի 2026թ. N ՄՈ/145-Ա

ք. Արմավիր

### ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի 2026 թվականի մարտի 16-ի զեկուցագիրը և «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրի կողմից տրված էպիկրիզը.

**ո ր ո շ ո ւ մ ե մ**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանին երկարատև հիվանդության կապակցությամբ, տրամադրել միանվագ դրամական օգնություն մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով՝ 616512 (վեց հարյուր տասնվեց հազար հինգ հարյուր տասներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը (պետ՝ Ա. Հակոբյան)՝ քաղաքացիական ծառայողի միանվագ դրամական օգնության ֆինանսավորումն իրականացնել աշխատավարձի և դրան հավասարեցված միջոցների խնայողությունների հաշվին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ